Զի չէ լուեալ ամենեքին, թէ թգ. ոք լեալ է կին, աջապ թէ օրն վերջին, որ սրով միմեանց կոտորեցին»(*)։

Վերջապէս Աւագի գլուխ գործոցն է մի Աստուածաշնչի նկարազարդութիւնը։ Աստուածաշունչը գրուած է Կիլիկիայում Մարտիրոս աբեղայի ձեռքով, որ Աւագն, այժմ վարդապետ արդէն, իւր այցելութեան ժամանակ նուէր է ստանում Կոստանդին թագաւորից և Մխիթար կաթուղիկոսից, և հայրենիք բերելով, նկարազարդում է ճոխ կերպով «պարոն Սօրթզաթմիշ»ի և նորա կնոջ Բէգիխաթունի համար, «յայս գաւառ Տփխեաց Փայտակարան նահանգիս»։ Նչեցուն աշակերտելը հաստատւում է հետևեալ փոքրիկ յիշատակարանով 101բ. «Զհամշիրակ և զլծակից եղբայրն մեր ի Քս. զՍարգիս վդ. Մոչաղբերցի աղաչեմ յիշել ի քս.։ Նաև ըստ հոգո հայրն մեր և զուճոյ, աւելի կիլիկեան քան արևելեան ոճով։ Ուշադրութեան արժանի են աւելի ստացողների պատկերները, ինչպէս Ասլանի և Նկարչի պատկերները Երևանի ձեռագրի մէջ (№ 99, 24բ. 25ա. պատկ. 227), իսկ Աստուածաշնչի ծննդեան պատկերի տակ (Էջմ. № 1756 նժ. 400բ., պատկ. 228) Սորղաթմիշի և Բէգիխաթունի, թաթարական շրջանի իշխանական ըզգեստով։ Աւագի մանրանկարչութեան մասին ևս երկար պիտի խօսենք մանրանկարչութեան նուիրուած մեր գործի մէջ. առ այժմ տալիս ենք այս երկու մանրանկարները, ընթերցողին ճաշակ և գաղափար տալու համար։

Եսայի Նչեցու եկեղեցական գործունէութիւնը կապուած է ամբողջապէս մի շարժման հետ, որ երե-



Պատկեր 221.

սուցիչն զեռամեծն Եսայի ծնողիւքն, ամէն, ամէն»։ Ձեռագիրը նկարազարդուած է «հայոց ԸՃԶ» և Քրիստոսի «Ռ. ԴՃ. ԾԸ» թուին։

Աւագի արուեստը փափուկ է և նուրբ, դէմքերը լաւ մշակուած. դաշտանկարները մեղմ և ակնահա-

(*) Գրչի ակնարկած կինը Ասթիբէգն է, Աբու Սէյդի քոյրը, որ թագաւորեց 1338/9 թուին (տես Stenli Len Poul, Moussoulman Skaya Dinastya, perev. V. Bartold ի. S. P. 1899, str. 182/3)։ Մխիթարի ձեռագրի №ն է Էջմ. 4429։ Նորանն է նաև Երևան № 111, ընտիր բոլորգրով աւետարանը, ճոխ նկարազարդուած նորա կողմից ծերութեան հասակում ՊԶ = 1357 թուին, արուեստով մի կողմից նման Աւագին և ենթարկուած նորա ազդեցութեան, ուրեմն և միջնորդաբար կապուած Գլաձորի հետ, միւս կողմից պարսիկ-մոնղոլական դրոշմ ունի։

ւան եկաւ ԺԴ. դարի վերջերում՝ նախ Կիլիկիայում եւ ապա ԺԴ. դարի քսանական թուականներին, արևելեան Հայաստանում. այդ միարարական շարժումն էր։ Յայտնի է Գրիգոր Անաւարզեցու և Հեթում Բ.ի դիրքը այդ խնդրում. Անաւարզեցին իւր հակումները, պարզ ցոյց տուաւ կաթուղիկոսութեան երկրորդ տարին 1294ին կրկնազատկի առթիւ. նա համոզեց թագաւորին և ամբողջ Կիլիկիայում էլ զատիկը պաշտօնապէս տօնել տուեց մի շաբաթ առաջ՝ Ծաղկազարդին, դորա հետ նաև որոշ աւանդութիւններ առնելով Հռոմներից և մերից յապաւելով որոշ բաներ, գործադրելով և բռնութիւն՝ «բազումք գանեալ և աքսորեալ», թէև շատերը եպիսկոպոսներից և վարդապետներից յանձն չառան։ Հեթում Բ.ն էլ իւր Աս-